

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԲԵՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Միջոցառումը	Ակնկալվող անմիջական արդյունք	Ժամկետը	Կատարման ընթացքը
<p align="center">Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույց /ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշում/</p>				
<p align="center">1. Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների զարգացում</p>				
1.1	ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի մինչև 2026թ. երկարաձգման ծրագրի աշխատանքների իրականացում	ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդյունավետ և անվտանգ աշխատանքի ապահովում մինչև 2026թ.	2022-2025 թվականներ	Միջոցառման իրականացման վերջնաժամկետ էր սահմանված 2025թ. դեկտեմբերի 31-ը, սակայն միջոցառման շրջանակներում իրականացվող մրցութային գործընթացների երկարաձգմամբ, մասնավորապես բազմաթիվ գնման մրցույթների չեղարկմամբ՝ սահմանված գնից ավելի բարձր գին ներկայացնելու կամ հաղթող մասնակցի կողմից վերջնական պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու պատճառով, կապալառուների կամ մատակարարների կողմից կնքված պայմանագրերի ժամանակացույցով սահմանված ժամկետների խախտմամբ, համաշխարհային աշխարհաքաղաքական իրավիճակի սրմամբ, որը հանգեցրել է առանձին տեսակի ապրանքների արտահանման-ներկրման պատժամիջոցային սահմանափակումների, պատժամիջոցների տակ գտնվող բանկերի միջոցով ֆինանսական գործարքների իրականացման արգելքների, լոգիստիկ սխեմաների /ապրանքների առաքում/ իրականացման բարդացումներով պայմանավորված, աշխատանքները կավարտվեն ուշացմամբ, աշխատանքների մի մասի իրականացումը տեղափոխվել է 2026թ.:
1.8	Այգ-1 200 ՄՎտ դրվածքային հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում	Էներգետիկ անկախության մակարդակի բարձրացում	2025թ. դեկտեմբեր	ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 25-ի N1167-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Հայաստանում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև «ԱՅԳ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ)

				<p>էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր), որով կայանի «Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը» սահմանվել է «2025 թվականի դեկտեմբերի 1-ը»: Սակայն, պայմանավորված այն փաստով, որ Համաձայնագրի բազմաթիվ կետերի կատարումն անմիջականորեն կապված են ANIF-ի 15% պետական բաժնեմասի խնդրի հետ՝ 20.06.2025թ.-ի ՀՀ կառավարության N 804-Ա որոշմամբ սահմանվել է որ ANIF-ի 15% բաժնեմասը ներդրվի «Արևային էներգետիկայի զարգացման» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում: Նշված գործընթացի լիազոր մարմինն է Էկոնոմիկայի նախարարությունը: ԷՆ-ի տեղեկացմամբ՝ 2026թ.-ին նախատեսվում է Համաձայնագրի որոշ դրույթների վերանայում, որով փոփոխություն կկատարվի նաև «Շինարարության Մեկնարկի Ամսաթիվում»:</p>
1.13	<p>Հողմային կայանների կառուցում՝ փոքր և համակարգային նշանակության մինչև 500 ՄՎտ հզորությամբ, մրցակցային սակագնային առաջարկների առկայության դեպքում</p>	<p>Էներգետիկ անկախության մակարդակի բարձրացում</p>	2025-2040թթ.	<p>Հողմային էներգիայի ներուժի գնահատման և հողմակայաններ կառուցելու նպատակով Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) տեխնիկական աջակցությամբ իրականացվում է «Առաջարկվող գիտելիք և տեխնիկական աջակցություն Հայաստանին՝ գնահատելու հողմային էներգիայի ծրագրերի կենսունակությունը» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում նախատեսված հեռանկարային տարածքներից ընտրվել է Քարախաչը, որտեղ էլ սկսվել են իրականացվել քամու պոտենցիալի չափումներ:</p> <p>Ծրագրի շրջանակներում իրականացվել են նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ և հաշվարկներ, վերլուծություններ, ընտրվել է տեղանքը, կառուցվել է 2 աշտարակ, տեղադրվել 1 լիդար, տեղադրվել են չափիչ սարքավորումներ: Ներկայում երեք կետով իրականացվում է քամու մշտադիտարկում: 2025թ. օգոստոսին տեխնիկական աջակցության խորհրդատուի կողմից պատրաստվել է Հայաստանում</p>

				<p>հողմային էլեկտրաէներգիայի արտադրության պոտենցիալ ծրագրերի կենսունակության գնահատման նախնական հաշվետվությունը: Նախնական արդյունքներով դիտարկվում է 150 ՄՎտ դրվածքային հզորությամբ հողմային էլեկտրակայանի կառուցման հնարավորությունը՝ համակցելով 15 ՄՎտ հզորությամբ կուտակչի հետ (տարողունակությունը՝ 1 և 2 ժամ):</p> <p>Չափումների արդյունքների ամփոփումը նախատեսվում է ավարտել 2026 թվականին, որի արդյունքներով 150 ՄՎտ հզորությամբ հողմային կայանի կառուցման նպատակով կարող է դիտարկվել ներդրումային փաթեթի կազմման հնարավորությունը:</p>
--	--	--	--	---

2. Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցի զարգացում

2.1	«Չարենցավան-3» 110 կՎ լարման ենթակայանի վերակառուցում	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության բարձրացում	2023-2026 թվականներ	<p>Միջոցառման շրջանակներում «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման նպատակով միջոցառումն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «EFACEC Engenharía e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 2023թ. մարտի 16-ին, սակայն Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը և չի ավարտել ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Քննարկումների և բանակցությունների արդյունքում Պատվիրատուի և Կապալառուի միջև սահմանված կարգով ստորագրվել է Հաշտության համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր): Համաձայնագրի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է լուծված: Քննարկվում է ենթակայանի վերակառուցման իրականացման հետագա հարցը, մասնավորապես՝ ենթակայանի ամբողջական վերակառուցման նպատակով իրականացվել է ներմուծված սարքավորումների գույքագրում, իրականացվում է կատարված շինարարական աշխատանքների ծավալների ճշգրտում,</p>
-----	---	--	---------------------	--

				որից հետո կիրականացվի ճշտված ծավալներով ծառայությունների ձեռքբերման գնման գործընթաց:
4. Էլեկտրաէներգետիկական շուկա				
4.3	Կիրառվող սակագնային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված կարգավորումների մշակում	Արդյունավետ սակագնային քաղաքականության ապահովում	2025թ. դեկտեմբեր	<p>«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գիշերային և ցերեկային սակագների հետագա կիրառության նպատակահարմարության, սպառողների համար ամսական հաստատուն սպասարկման վճարների սահմանման ուսումնասիրության արդյունքների մասին» վերլուծական տեղեկանքը:</p> <p>«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2025թ.-ին մշակվել է «Էլեկտրաէներգիա սպառողների համար ռեակտիվ էներգիայի սակագների ներդրման նպատակով ուսումնասիրության արդյունքների մասին» վերլուծական տեղեկանքը:</p> <p>«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.11.2022թ.-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N°359Ն, 2007 թվականի հունիսի 15-ի N°275Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 520-Ն որոշմամբ հաստատվել է էլեկտրաէներգետիկական</p>
4.3.1	Էլեկտրաէներգիա սպառողների համար գործող գիշերային և ցերեկային սակագների հետագա կիրառության նպատակահարմարության, սպառողների համար ամսական հաստատուն սպասարկման վճարների սահմանման ուսումնասիրություն			
4.3.2	Էլեկտրաէներգիա սպառողների համար ռեակտիվ էներգիայի սակագների ներդրման նպատակով ուսումնասիրությունների իրականացում			
4.3.3	Էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների սահմանման (վերանայման) մեթոդիկայի և կարգի ընդունում			

				համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան և էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների սահմանման ու վերանայման կարգը:
4.5.1	«Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության օրենսդրական դաշտի կատարելագործում (բարելավում)	2025թ. դեկտեմբեր	ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ 2023 թվականին մշակվել է «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» նոր օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով առաջարկվում են վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտներում հիմնարար բարեփոխումներ: Նախագիծը շուրջ երեք տարի է գտնվում է մասնագիտական քննարկումների փուլում՝ այն խմբագրվել է շուրջ հինգ անգամ: Պայմանավորված 2025 թվականի հունվարին ԱՄՆ ՄԶԳ աջակցության դադարեցմամբ՝ Նախագծի վերջնական ամփոփումը և վերջնականացումը իրականացվել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ: Նախագիծը նախատեսվում է Ազգային ժողով ներկայացնել 2026 թվականին:
4.6	«Էլեկտրաէներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի մշակում՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների ներդրման ընթացքում առաջ եկած խնդիրները:	Էլեկտրաէներգիայի և հզորության ազատականացված շուկայի կարգավորման և նորմատիվային դաշտի ապահովում	2023-2025 թվականներ	ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ 2023 թվականին մշակվել է «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագիծը նախատեսում է էլեկտրաէներգետիկական համակարգի նոր մոդելի և կառուցվածքի ամբողջական փոփոխություններ: Նախագիծը շուրջ երեք տարի է գտնվում է մասնագիտական քննարկումների փուլում՝ այն խմբագրվել է շուրջ հինգ անգամ: Պայմանավորված 2025 թվականի հունվարին ԱՄՆ ՄԶԳ աջակցության դադարեցմամբ՝ Նախագծի վերջնական ամփոփումը և վերջնականացումը իրականացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ: Նախագիծը նախատեսվում է Ազգային ժողով ներկայացնել 2026 թվականին:
5. Տարածաշրջանային էներգետիկ համագործակցություն				
5.1	ԵԱՏՄ Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում մասնակցություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 20.12.2019թ. N	Կարգավորող փաստաթղթերի մշակում և ընդունում	2021-2026թթ.	2025թ.-ի ընթացքում շարունակվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր

	<p>31 որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման պլանի:</p>			<p>Էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները:</p> <p>2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի միջպետական գծերի թողունակության հնարավորության որոշման և բաշխման և ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի շրջանակներում էլեկտրաէներգիայի (հզորության) միջպետական փոխանցման ծառայություններին մուտք գործելու կանոնները:</p> <p>2025թ.-ին կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից էլեկտրաէներգետիկայի խորհրդատվական կոմիտեների մի շարք նիստեր և խորհրդակցություններ:</p>
5.2	<p>ԵԱՏՄ բնական գազի ընդհանուր շուկային մասնակցություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 31.05.2016թ. N 7 որոշման:</p>	<p>Կարգավորող փաստաթղթերի մշակում և ընդունում</p>	2021-2026թթ.	<p>2014թ. մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված է Միության գազի ընդհանուր շուկայի փուլ առ փուլ (3 փուլով) ձևավորում (83-րդ և 104-րդ հոդվածների և 22-րդ հավելվածի համաձայն): Այդ նպատակով Պայմանագրով նախատեսված է մի շարք հիմնարար փաստաթղթերի ընդունում, այդ թվում՝ համապատասխան Հայեցակարգի, Ծրագրի, ինչպես նաև դրանց հիման վրա Գազի ընդհանուր շուկայի մասին միջազգային պայմանագրի կնքում: Պայմանագրով նախատեսված է, որ Միության գազի ընդհանուր շուկան կգործարկվի ոչ ուշ, քան 2025թ. հունվարի 1-ը:</p> <p>Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2024թ. դեկտեմբերի 26-ի թիվ 22 որոշմամբ գազի բնագավառում անդամ պետությունների միջև 2025թ. հունվարի 1-ի դրությամբ գործող փոխհարաբերությունների համակարգը սահմանվել է որպես ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկա՝ ձևավորված անդամ պետությունների օրենսդրության և միջազգային</p>

				<p>պայմանների հաշվառմամբ: Նույն որոշմամբ ԵՏՀ-ին հանձնարարվել է անդամ պետությունների հետ համատեղ մշակել Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի զարգացման ծրագիր մինչև 2030 թվականը, ինչպես նաև Եվրասիական տնտեսության միության պայմաններում փոփոխությունների նախագիծ: 2025թ.-ի ընթացքում շարունակվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները: Կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից նավթի և գազի խորհրդատվական կոմիտեների, գազի շուկայի ձևավորման գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքային խմբի մի շարք նիստեր և խորհրդակցություններ:</p>
5.3	<p>Հայաստան-Եվրոպական միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված միջոցառումների իրականացում՝ էներգետիկայի բնագավառում բարեփոխումների իրականացում համաձայն ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ ընդունված ճանապարհային քարտեզի, որտեղ հստակ նշված են իրականացման ժամկետներն ու պատասխանատու մարմինները:</p>	<p>Հայաստան-Եվրոպական միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրագործում</p>	2021-2026թթ.	<p>ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ սահմանած ժամկետներում իրականացվել են ՀՀ օրենսդրության մոտարկման աշխատանքները ԵՄ հրահանգներին և Կանոնակարգին: ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ համաձայնագրով նախատեսված աշխատանքները շարունակական են: Առ այսօր իրականացվել են՝</p> <ul style="list-style-type: none"> • ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվել են՝ ✓ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բացերի վերլուծություն, ✓ «Հայաստանում վերականգնվող էներգիայի զարգացման նպատակով քաղաքականության, իրավական, կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակներում բացերի վերլուծություն», ✓ Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի շրջանակներում՝ «ՎԷԱ շուկայաին աջակցության

			<p>սխեմաների կիրառման և լավագույն փորձը» նախագծի մշակում,</p> <p>✓ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացման շրջանակներում՝</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների նոր առևտրային կանոնների, բաշխման և հաղորդման ցանցային կանոնների հաստատումը, Շուկայի օպերատորի ստեղծումը, որոնք մի քանի քայլ առաջ են մղում ՀԸԳՀ շրջանակներում ստանձնած մոտարկման աշխատանքները: 714/2009 (ԵՀ) կանոնակարգի մոտարկմանն ուղղված՝ 2022թ. փետրվարի 1-ից անցում է կատարվել էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին: - «Տետրատեկ» ընկերության կողմից մշակվել են «էլեկտրաէներգետիկայի մասին» և «վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» նոր օրենքների նախագծերը: <ul style="list-style-type: none"> • Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի անդրսահմանային փոխանակման պայմանների կանոնակարգումը ապահովելու նպատակով 2022թ. օգոստոսի 4-ին Թբիլիսիում էլեկտրաէներգետիկական համակարգի հայկական և վրացական համապատասխան ընկերությունների միջև ստորագրվել է «ՀՀ-ի և Վրաստանի միջև վթարային իրավիճակներում էլեկտրաէներգիայի մատակարարումների մասին» պայմանագիրը: Նախատեսվում է ստորագրել նաև «ՀՀ-ի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի կոմերցիոն մատակարարումների շրջանակներում շեղումների կարգավորման մասին» պայմանագիրը, որը ներկայումս գտնվում է համաձայնեցման փուլում: • ՀՀ ՏԿԵ նախարարությունը՝ Համաշխարհային բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ մշակել է էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի կառուցման բիզնես մոդելների հայեցակարգը, որի հիման վրա ՀՀ հանրային
--	--	--	---

			<p>ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվում է էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի պարագայում կիրառվող սակագնային քաղաքականության ուսումնասիրություն:</p> <ul style="list-style-type: none"> • Շենքերի էներգաարդյունավետության մասին պահանջը ներառվել է «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում: ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ ընդունվել է «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը»: Քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել են համապատասխան ակտերը. - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թ. դեկտեմբերի 22-ի N31-Ն հրամանը՝ ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու մասին. - Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. հունվարի 21-ի N77-Ն «Պետության կարիքների ապահովման նպատակով ձեռք բերվող էներգասպառող արտադրանքների էներգետիկ բնութագրերի պարտադիր պահանջների խմբերի ցանկը սահմանելու մասին» որոշումը: • ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021թ. մայիսի 19-ի N180-Ն որոշմամբ հաստատվել են էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման, լիցենզավորված անձանց ներդրումների մասին հաշվետվության ներկայացման, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ներդրումային գործունեության մոնիթորինգի կարգերը:
--	--	--	--

				<p>Հաշվի առնելով Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի նորացման հանձնառությունը՝ մշակվել և ՀՀ-ԵՄ ՀԸԳ-ից բխող էներգետիկայի բնագավառին առնչվող մոտարկման ենթակա իրավական և քաղաքական հանձնառությունների նոր ճանապարհային քարտեզը:</p> <ul style="list-style-type: none"> • Միևնույն ժամանակ, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ մշակված «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունաբերության մասին» նոր օրենքների նախագծերը սահմանված կարգով ներկայացվել են շահագրգիռ գերատեսչություններին՝ կարծիքի:
5.4	Հայաստանի և Իրանի միջև էներգետիկ համագործակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում և համաձայնագրերի կնքում	Հայաստան-Իրան գազէլեկտրա-էներգիայի դիմաց փոխանակման ծրագրի իրագործում	2021-2025թթ.	<p>2022թ. նոյեմբերի 1-ին ՀՀ վարչապետի Իրան այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվել է «Բնական գազի բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր, որով հայկական և իրանական համապատասխան ընկերություններին հանձնարարվել է ստորագրել «Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ պայմանագիր՝ հաշվի առնելով, որ գործող պայմանագրի ժամկետը լրանում է 2026թ.-ին: 2023թ. օգոստոսի 10-ին երկու երկրների համապատասխան ընկերությունների միջև ստորագրվել է պայմանագիրը, համաձայն որի ծրագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2030թ.: Պայմանագրով նախատեսվում է նաև մեծացնել Իրանից ներմուծվող գազի և դրա դիմաց Հայաստանից արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալները:</p> <p>2024թ. հայկական և իրանական կողմերի միջև վերացվել են առկա խոչընդոտները (Արաքսի գետանցի՝ հայկական մասնաբաժնի վճարում) և ծավալների ավելացման դրույթները մտել են ուժի մեջ:</p>
5.5	Հայաստանի և Վրաստանի միջև էներգետիկ համագործակցության	Արդյունքում նախադրյալներ կստեղծվի երկու երկրների	2021-2026թթ.	Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի միջպետական առևտրի իրականացման նպատակով

	ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում և համաձայնագրերի կնքում	միջև էլեկտրաէներգիայի կանոնավոր առևտրի իրականացման համար՝ հնարավորինս հենվելով Եվրոպական միության դիրեկտիվների պահանջների վրա:		Հայաստան-Վրաստան համատեղ աշխատանքային խմբի կողմից շարունակվել են աշխատանքները: Էլեկտրաէներգետիկական համակարգի հայկական և վրացական համապատասխան ընկերությունների միջև ստորագրվել է «ՀՀ-ի և Վրաստանի միջև վթարային իրավիճակներում էլեկտրաէներգիայի մատակարարումների մասին» պայմանագիրը: Շրջանառության մեջ է գտնվում «ՀՀ-ի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի կոմերցիոն մատակարարումների շրջանակներում շեղումների կարգավորման մասին» պայմանագրի նախագիծը: Այժմ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխհոսքերն իրականացվում են կոմերցիոն պայմանագրով, որոնք կազմակերպվում են հայկական-վրացական համապատասխան ընկերությունների (հայկական ԷԷՕ-ի, վրացական GSE-ի) կողմից՝ էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին պայմանագրի հիման վրա: Հետագայում՝ Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման օդային գծի շահագործման հանձնելու դեպքում կմշակվի զուգահեռ աշխատանքի մասին նոր պայմանագիր: Բացի այդ, ներկայում վրացական կողմն անցում է կատարում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման նոր մոդելի, ինչով պայմանավորված՝ նախատեսվում է նոր օրենսդրական փոփոխություններ: Նշված գործընթացի ավարտից հետո նախատեսվում է «ՀՀ-ի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին» համաձայնագրի ստորագրում:
5.5.1	Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի միջպետական առևտրի իրականացման նպատակով Հայաստան-Վրաստան համատեղ աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում և էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին համաձայնագրի մշակում		2021-2026թթ.	
5.5.2	Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի առևտրի սկզբունքների մասին համաձայնագրի կնքում		2021-2026թթ.	

6. Զերմամատակարարում

6.1	Աստիճանաբար ընդլայնել այն ծրագրերի իրականացումը, որոնք կնպաստեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսների վրա հիմնված ջեռուցման և տաք ջրի արտադրության անհատական համակարգերի օգտագործմանը	Արևային ջրատաքացուցիչների համակարգերի ներդրում 1500-7500 դրամ/լիտր (600C700C)	Շարունակական մինչև 2040թ. և հետո	2017թ.-ից Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվում է Հայաստանի համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագիրը: Ծրագրի մեկնարկից մինչ օրս ՀՀ բնակավայրերում տեղադրվել են 1368,0 մլն ՀՀ դրամի 3426 հատ արևային ջրատաքացուցիչ անհատական համակարգեր, որոնք
-----	--	---	----------------------------------	---

				ապահովում են տարեկան 9570,0 ՄՎտոժ էներգիայի խնայողություն, այդ թվում՝ 2025 թվականի տասնմեկ ամիսների ընթացքում՝ 3,87 մլն ՀՀ դրամի 9 հատ արևային ջրատաքացուցիչ անհատական համակարգեր, որոնք ապահովում են տարեկան 28,8 ՄՎտոժ էներգիայի խնայողություն:
6.2	«Ջերմամատակարարման մասին» ՀՀ նոր օրենքի մշակում		2023-2025 թվականներ	<p>«Ջերմամատակարարման մասին» օրենքի մշակման նպատակով «ԵՄ-ն էներգետիկայի համար» ծրագրի շրջանակներում իրականացվել է բացերի վերլուծություն: Սակայն, անհրաժեշտություն կա նաև միջազգային փորձի ուսումնասիրության, մասնավորապես՝ օրենքի նախագծի կառուցվածքի, կարգավորումների, ԵՄ երկրների նմանատիպ օրենքների հետ համադրման, որոնք պահանջում են տևական աշխատանք:</p> <p>Բացի այդ, ՀՀ-ԵՄ ԸՀԳՀ-ով իրականացվելու են ԵՄ հրահանգներին և կանոնակարգերին ՀՀ օրենսդրության մոտարկման աշխատանքներ, որոնք նույնպես կապված են նոր օրենքի մշակման հետ: ԸՀԳՀ ճանապարհային նոր քարտեզով մոտարկման աշխատանքների կատարման ժամկետը սահմանված է 2029թ. դեկտեմբեր:</p> <p>Մինևույն ժամանակ ներկայում մշակվել և շրջանառվում է «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» նոր օրենքի նախագիծը, որն իր մեջ ներառում է նաև ջերմամատակարարմանը վերաբերող բաժին:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև արևային կայանների աննախադեպ առաջանցիկ զարգացման տեմպերը՝ ներկայում քննարկվում է «Ջերմամատակարարման մասին» առանձին նոր օրենքի մշակման նպատակահարմարության հարցը:</p>
7. Գազամատակարարում				

7.1	«Գազամատակարարման մասին» ժամանակակից սկզբունքների վրա հիմնված նոր օրենքի մշակում	Ոլորտի կառավարման սկզբունքների հստակեցում, հիմնված միջազգային լավագույն փորձի վրա	2023-2025 թվականներ	<p>«Գազամատակարարման մասին» նոր օրենքի մշակման նպատակով «ԵՄ-ն էներգետիկայի համար» ծրագրի շրջանակներում իրականացվել է բացերի վերլուծություն: Սակայն, անհրաժեշտություն կա նաև միջազգային փորձի ուսումնասիրության, մասնագիտական մանրակրկիտ քննարկման, մասնավորապես՝ օրենքի նախագծի կառուցվածքի, կարգավորումների, նմանատիպ օրենքների հետ համադրման, նկատի ունենալով դրանով նախատեսվող նոր կարգավորումները և կառուցակարգերը, ինչը պահանջում է տևական աշխատանք:</p> <p>Բացի այդ, հաշվի առնելով, որ Հայաստանը մասնակցում է ԵԱՏՄ բնական գազի ընդհանուր շուկայի ձևավորման աշխատանքներին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2024թ. դեկտեմբերի 26-ի թիվ 22 որոշմամբ գազի բնագավառում անդամ պետությունների միջև 2025թ. հունվարի 1-ի դրությամբ գործող փոխհարաբերությունների համակարգը սահմանվել է որպես ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկա՝ ձևավորված անդամ պետությունների օրենսդրության և միջազգային պայմանների հաշվառմամբ: Պայմանավորված վերոգրյալով՝ ներկայում քննարկվում է «Գազամատակարարման մասին» նոր առանձին օրենքի մշակման նպատակահարմարության հարցը:</p>
-----	--	---	---------------------	---

8. Էներգախնայողություն

8.3	ՀՀ-ում կանոնավոր տարեկան էներգետիկ վիճակագրության իրականացում	ՀՀ տարեկան էներգետիկ հաշվեկշռի կազմում՝ միջազգային էներգետիկ հանձնաժողովի ստանդարտներին համապատասխան	տարեկան պարբերականությամբ	2025թ. փետրվարին ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվել է 2023թ. ՀՀ էներգետիկ հաշվեկշիռը, ինչը տեղադրված է https://www.mtad.am/pages/ra-energy-balance կայքում:
8.4	Էներգաարդյունավետության և էներգախնայողության նոր չափանիշների սահմանում և դրանց իրականացումը ապահովող ազգային ստանդարտների	Էներգաարդյունավետության և էներգախնայողության նոր ազգային ստանդարտներ	շարունակական	Էներգաարդյունավետության և էներգախնայողության նոր չափանիշների սահմանմանն ու դրանց իրականացումն ապահովող ազգային ստանդարտների մշակման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

	մշակում և ընդունում	արտադրանքի և ծառայությունների համար	<p>2024թ. -ին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ կողմից ընդունվել են էներգաարդյունավետության և էներգախնայողության նոր չափանիշներ սահմանող և դրանց իրականացումն ապահովող թվով վեց ազգային ստանդարտներ.</p> <p>2025թ. -ին վերանայվել և լրամշակվել է «Ջերմամեկուսիչ շինարարական նյութերի և շինվածքների տվյալների շտեմարանը»:</p> <p>«Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.11.2025թ թիվ 198-Ա հրամանով հավանություն է տրվել «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ոլորտի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿ/00101711 ծրագրի աջակցությամբ մշակված՝ «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների» խորհրդատվական ծեռնարկին:</p> <p>«Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.11.2025թ թիվ 199-Ա հրամանով հավանություն է տրվել «Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ գործիքի (GFDRR)» աջակցությամբ մշակված «Հայաստանի համար կանաչ շենքերի նախագծման ուղեցույցին»:</p>
--	---------------------	-------------------------------------	--

9. Թվային էներգետիկա

9.4	<p>ՀԱԷԿ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.4.1 – 9.4.2 կետերի</p> <p>9.4.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards"</p> <p>9.4.2 NIST SP 800-53 "Security and Privacy Controls for Information Systems and Organizations"</p>	ՀԱԷԿ կիրճեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	«ՀԱԷԿ» ՓԲԸ-ում ներդրվել է տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ, որը համապատասխանում է ISO/IEC 27001:2022 «Տեղեկատվական անվտանգություն, կիրճեռանվտանգություն և գաղտնիության պաշտպանություն. Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջներին, որի համար տրվել է համապատասխանության սերտիֆիկատ:
9.5	Երևանի ՋԷԿ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների	Երևանի ՋԷԿ	2023-2025 թվականներ	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն ավարտել է կիրճեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովման նպատակով տեղեկատվական

	<p>ներդրում՝ համաձայն 9.5.1 – 9.5.2 կետերի</p> <p>9.5.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards"</p> <p>9.5.2 NIST SP 800-53 "Security and Privacy Controls for Information Systems and Organizations"</p>	կիրբեռանվտան-գույթյան և թվային փոխակերպման ապահովում		անվտանգության միջազգային ստանդարտի ներդրման աշխատանքները և ստացել է ISO 27001:2022 միջազգային սերիֆիկատ:
9.6	<p>ԲԷՑ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.6.1 – 9.6.2 կետերի</p> <p>9.6.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards"</p> <p>9.6.2 NIST SP 800-53 "Security and Privacy Controls for Information Systems and Organizations"</p>	ԲԷՑ կիրբեռանվտան-գույթյան և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	«ԲԷՑ» ՓԲԸ-ն ավարտել է կիրբեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովման նպատակով տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտի ներդրման աշխատանքները: Իրականացվում է հավաստագրման աուդիտի գործընթացը:
9.7	<p>ԷԷՀՕ տեղեկատվական անվտանգության միջազգային Ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.7.1 – 9.7.2 կետերի</p> <p>9.7.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards"</p> <p>9.7.2 NIST SP 800-53 "Security and Privacy Controls for Information Systems and Organizations"</p>	ԷԷՀՕ կիրբեռանվտան-գույթյան և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	«ԷԷՀՕ» ՓԲԸ-ն ավարտել է կիրբեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովման նպատակով տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտի ներդրման աշխատանքները և ստացել է ISO 27001:2022 միջազգային սերիֆիկատը:
9.8	<p>ԷԷՀՕ տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում՝ համաձայն 9.8.1 – 9.8.2 կետերի</p> <p>9.8.1 ISO/IEC 27000-ը " Security Management Systems (ISMS) standards"</p> <p>9.8.2 NIST SP 800-53 "Security and Privacy Controls for Information Systems and Organizations"</p>	ԷԷՀՕ կիրբեռանվտան-գույթյան և թվային փոխակերպման ապահովում	2023-2025 թվականներ	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն ավարտել է կիրբեռանվտանգության և թվային փոխակերպման ապահովման նպատակով տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտի ներդրման աշխատանքները և ստացել է ISO 27001 միջազգային սերիֆիկատը:

10. Գիտելիքահենք էներգետիկա

10.1	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Էներգահամակարգի անվտանգ և հուսալի շահագործման և զարգացման համար բարձրակարգ գիտելիքահենք մասնագետների ապահովում	շարունակական	<p>ՀԱՊՀ-ում գործում է Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտը, որը պատասխանատու է էներգետիկայի ոլորտում բակալավրի, մագիստրոսի ու ասպիրանտական կրթական ծրագրերի իրականացման համար: ԲՈՒՀ-ի գիտակրթական ենթակառուցվածքն ուղղված է էներգետիկ համակարգերի, էլեկտրական համակարգերի, էներգահամակարգերի նախագծման, շահագործման և արդիականացման գիտելիքների փոխանցմանը: Ինստիտուտն ուսանողներին տալիս է թե տեսական հիմունքներ, թե կիրառական կարողություններ՝ մասնագիտացված ինժեներական աշխատանքների իրականացման համար: Ուսանողներն ուսման ընթացքում ծանոթանում են էներգետիկ համակարգերի աշխատանքին, հզորության հաշվարկներին, զննման մեթոդներին, կայուն էներգիայի աղբյուրների օգտագործմանը և այլ գործնական գործառույթներին: Համագործակցում են էներգետիկ ոլորտի միջազգային կառույցների հետ</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում ՀԱՊՀ-ում գործարկվել է Էներգետիկայի ռազմավարական զարգացման լաբորատորիան: Այն հնարավորություն է տալիս բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներին ստանալ գործնական հմտություններ՝ իրական էներգետիկ նախագծերի վրա աշխատելու համար: Մասնավորապես, ուսումնասիրել էներգաարդյունավետության ու վերականգնվող էներգիայի ֆինանսավորման մեխանիզմները, իրականացնել տվյալների վերլուծություն, աջակցել էներգետիկ անվտանգության գնահատման աշխատանքներին և այլն:</p> <p>ՀԱՊՀ-ն մասնակցում է EU Horizon Europe ֆինանսավորմամբ գործող STREACS նախագծին, որի նպատակն է մեծացնել Հայաստանի գիտահետազոտական կարողությունները էներգետիկ տրանսֆորմացիայի և անվտանգության ոլորտներում: Ծրագիրը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - գիտական համագործակցություններ եվրոպական համալսարանների հետ, - քննարկումներ, դասընթացներ և գիտաժողովներ՝ էներգետիկ անվտանգության թեմայով,
------	---	--	--------------	---

				<ul style="list-style-type: none"> - գիտելիքի փոխանակում, մասնագիտական հմտությունների զարգացում, - երիտասարդ հետազոտողների միջազգային վարձակալություններ: <p>2025 թվականին ՀԱՊՀ Պոլիտեխնիկ գիտակրթական հիմնադրամի ֆինանսավորմամբ պոլիտեխնիկի էներգետիկ լուծումների մասնագիտական թիմի կողմից ՀԱՊՀ 17-րդ մասնաշենքի տանիքին տեղադրվել է 40 կՎտ հզորությամբ արևային կայան՝ համալրելով նախկինում համալսարանի տարբեր մասնաշենքերի տանիքներին տեղադրված 500 կՎտ հզորությամբ արևային կայանները:</p>
10.2	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Գիտահետազոտական ուսումնասիրությունների կիրառում էներգահամակարգի տարբեր ենթաոլորտներում	շարունակական	<p>«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 2025թ. ընթացքում իրականացվել են.</p> <p>-«ՀՀ էներգահամակարգի 220 կՎ և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 110 կՎ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկ և վերլուծություն» (ընթացքում է):.</p> <p>- «110-0.4 կՎ ցանցի կայունացված և լարման ռեժիմների հաշվարկներ և վերլուծություն, բաշխիչ ցանցերում ռեակտիվ հզորության կոմպենսացիայի միջոցառումների մշակում և գործող արտադրող կայանների աշխատանքով պայմանավորված բաշխիչ ցանցում ազդեցության գնահատման հաշվարկների իրականացում և որակավորման բարձրացման դասընթացների անցկացում» (ընթացքում է):.</p> <p>- Գիտական կադրերի պատրաստում և ճարտարագիտատեխնիկական ղեկավար կադրերի վերապատրաստում, որակավորման բարձրացման դասընթացների անցկացում (շարունակական):.</p> <p>- Հայաստանի 2024թ. էներգետիկ հաշվեկշռի կազմում (ընթացքում է):.</p> <p>- Գլխադասային հանձնաժողովի կողմից կազմակերպվող գիտելիքների ստուգում և էլեկտրաանվտանգության 5-րդ խմբի շնորհում (շարունակական):.</p>

				<ul style="list-style-type: none"> - «Հայաստանի Հանրապետության էլեկտրա-էներգետիկական համակարգի հաղորդման և բաշխման ցանցին միացվող արևային ֆոտովոլտային կայաններին ներկայացվող պահանջների նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակում» (ընթացքում է): - «Երևան քաղաքի 6(10) կՎ բաշխման ցանցերի միագծանի սխեմաների գծում (թվայնացում), սնուցման խափանման հնարավոր դեպքերի դիտարկում և վթարային սխեմաների մշակում» (ավարտված է): - «Երևան քաղաքի 6(10) կՎ Կենտրոն, Նոր-Նորք, Էրեբունի, Շենգավիթ, Մաշտոց, Արաբկիր ցանցերի միագծանի սխեմաների վերաբերյալ փոփոխությունների թվայնացում» (ընթացքում է): - Strengthening Research in Armenia for Energy Transition toward Climate Solutions (STREACS) (ընթացքում է):
10.3	«Հայատոմ» ՓԲԸ	Գիտահետազոտական ուսումնասիրությունների կիրառում ատոմային էներգետիկայի ոլորտներում	շարունակական	<p>«Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ կողմից 2025թ. ընթացքում իրականացվել են.</p> <ul style="list-style-type: none"> - ABKC («ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար N°3 և N°4 տուրբոգեներատորների թրթռման տվիչների տրամաչափման, վերանորոգման և կարգաբերման աշխատանքներ, - ՋՋԷՌ-440 էներգաբլոկներում քայքայումից առաջ արտահոսքի հայեցակարգի մշակում: - «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի անվտանգության հիմնավորման հաշվետվության մշակում (պարբերական դիտարկում), «ՀԱԷԿ» ՓԲԸ արտոնության պայմանների բավարարում: - «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի լիամասշտաբ վարժասարքի (ԼՄՎ) ընդլայնում, արդիականացում և շահագործման հանձնում: ԼՄՎ համալիր փորձարկում և արդյունաբերական շահագործման հանձնում: - «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի ԼՄՎ սպասարկման և շահագործման փաստաթղթերի և ուղեցույցների մշակում: - «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի ծանր վթարների կառավարման ուղեցույցների մշակում: «ՀԱԷԿ» ՓԲԸ արտոնության պայմանների բավարարում:

				<p>Երկու տարբեր պայմանագրերով կատարվել են ԱԷԿ-ների անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև ՋՋԷՌ Էներգաբլոկներով ԱԷԿ-ների սարքավորումների և համակարգերի շահագործման նորմատիվ տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում:</p>
--	--	--	--	---